ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24-ին՝ 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի հիշատակության օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի միաբանների ուղեկցությամբ այցելեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Ծիծեռնակաբերդում Ամենայն Հայոց Հայրապետը և ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ծաղկեպսակներ զետեղեցին հուշահամալիրի մոտ:

Այնուհետև անմար կրակի մոտ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն նահատակների հոգիների խաղաղության համար:

Արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, պետական այրեր:

*

* *

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Պատարագի ընթացքին Սրբազան Հայրն օրվա խորհրդի շուրջ քարոզ խոսեց:

Սուրբ Պատարագի ավարտին Մայր Տաճարի հարևանությամբ գտնվող Աղոթքի և ուխտի խաչքարի մոտ, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Արարողություններին մասնակցեց նաև Անդրկովկասում Պապական նվիրակ մոնսինյոր Կլաուդիո արքեպիսկոպոս Գուջերոտտին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հանդիսությունից առաջ Նախագահը հանդիպում է ունենում Հայաստանի Հանրապետության դեսպանների հետ